

ПАМЯТЬ

ВЕЧНО С НАМИ

7 декабря 2017 года – день 29 годовщины катастрофического землетрясения 1988 года в Армении. В тот холодный декабрь весь мир узнал о страшной трагедии, когда был разрушен целый город, а под его развалинами погибли десятки тысяч жителей. В развалины полностью обратился город Спитак, наполовину разрушился Ленинакан (ныне

– Гюмри) и Кировакан (ныне – Ванадзор) и другие города и села Армении. Спустя столько лет боль в сердцах армян не утихает, ежегодно в армянских церквях по всему миру служат панихиды по погибшим, в том числе и в армянских церквях Ростова и области.

В этот день из года в год армянская община Ростова-на-Дону считает



своим долгом вспомнить эти события и почтить память жертв, погибших во время землетрясения. Этот год не стал исключением, и с самого утра 7 декабря в церкви Сурб Карапет уже было многолюдно. В поминательных мероприятиях принимали участие и взрослые, и дети. После литургии по усопшим прихожане церкви возложили венки и цветы к хачкару, установленному в 2008 году в память о жерт-

вах землетрясения 1988 года в Армении.

Вечером в кинотеатре «Большой» состоялся кинопоказ фильма «Землетрясение», организованный РРОО «Нахичеванская-на-Дону армянская община» и РМОО «Донской союз армянской молодежи», при всесторонней поддержке кинокомпании «Марс Медиа» и Координационного Совета Российско-армянских организаций.

...ԴՂՂԴԱՅ ԳԵՏԻՆԸ, ԵՐԿԻՆՔԸ ՈՐՈՏԱՅ ՄԵՆՔ ԱՊՐԵԼՈՒ Ի ԵՆՔ ԴԵՌ, ՄԵՆՔ ԿԱ՛ՆՔ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Մարդկության բաժին սև փորձանքները հանկարծ խտացան, Տեղավորվեցին քառասուն պատժիչ վայրկյանների մեջ, Սև ամպերի պես անապատներից, ծովերից անցան, Եկան, պայթեցին ու ծավալվեցին մեր սուրբ հողի մեջ:

Երկիրը ցնցվեց, և ժամանակը մեր արյունոտվեց, Մեր մի բուռ ազգից ամեն վայրկյանը հազար կյանք խլեց, Մեր սև սրտերը մեծ ողբերգության լուրը ներխուժեց, Սև գրքերի մեջ հայոց պատմության մի նոր էջ գրվեց:

Շենքերը դարձան երկաթբետոնե դահիճներ անխիղճ, Մարդկանց սեղմեցին, ճգնեցին իրենց գրկում մահաբեր, Եթերն էլ դարձավ փլատակներում մեռնողների ճիչ Եվ ողջ աշխարհի ականջների մեջ ճչաց ահաբեկ:

Մեր ազգի ճիչը լսվեց այս անգամ, Լսվեց ամեն տեղ, լսվեց պարզորոշ, Քանի որ հարց չէր դա քաղաքական, Աշխարհը պարզեց գթության դրոշ:

Ճանապարհները եկան, խաչվեցին Մեր արնաշաղախ, անհանգիստ հողում, Շատ փրկիչների մեզ մոտ բերեցին, Որոնց աչքերում արցունք էր շողում:

Փրկիչ ջանքերը միավորվեցին Մրտացավ մարդկանց համայն աշխարհի, Եվ հազարավոր մարդկանց փրկեցին Այդ արհավիրքից դաժան, ամենի:

Սակայն շատերի միտքն էր քարացել Այն սարսափելի, սև վայրկյաններին, Երբ դժոխքի դուռն էր ասես բացվել Եվ կլանում էր, տանում բոլորին:

Նորից աչքերում նրանց պղտորված Շարքերն են հատում սև դագաղների, Որոնց մեջ էին որոնում կորած Դեմքերը իրենց հարազատների:

Հիշում են նրանք պատկերներ ցնցող, Երբ ողբում էին անարցունք, անձայն, Մտվերներ էին անցնող ու դարձող, Ամեն մեկը մի սգացող արձան:

Անցնում են օրեր, ամիսներ կրկին, Բայց սլաքները առաջ չեն գնում Նրանց մտքի սև լուսատախտակին Աղետի պահն է անվերջ կրկնվում:

Անաստա ՀԱՎՈՒՅԱՆ



1988 թվական, Երկրաշարժ՝ տառապանքների ճանապարհներով կարծրացած հողում... Երկիրը շարժվեց, և այդ նենգ շարժումը պետք է մխրճվեր Մայիտակ ու Լենինական, Վանաձոր, Նալբանդ անունով գյուղը պետք է ավերեր հիմնահատակ, պետք է ցնցեր Հայաստանի ողջ տարածքը, պետք է խենթացներ մի մի ողջ ժողովրդի ու չվերջացող արցունքների հեղեղի, փոշու, ծխի մեջ, ավերակների, փլատակված տների տակ պետք է մարեին բազմահազար հառաչանքներ ու փրկություն աղերսող մոր ու մանկան, ծերունիների, բողբոջող ջահելների, նոր հարսնացած ու կանաչ-կարմիրը նոր կապած երիտասարդների, երկունքի բերկրանքը չապրած դեռատի կանանց հուսահատ ճիչեր... Լուսաբացը չկարողացավ օր դառնալ, ցերեկը խավար գիշեր դարձավ, և մանկան ուրվականներով ու ստվերներով լցվեցին քաղաքները...

...Ավերված մանկապարտեզներից փոշու ու քարերի տակից կիսով չափ դրսում մնացած ջարդված, զգզված խաղալիքներն ասես ձայն էին տալիս անթաղ մանուկներին, օգնություն աղերսում, փլատակված դպրոցների շրջակայքում այս ու այն կողմ շարժված գրքերն ու տետրերը, դպրոցական պայուսակները նրա նց

էին փնտրում, ում ձեռքերն այլևս անկարող էին գիրք ու տետր բռնել, գրել ու բարբառել բառերը հայոց... Մի նոր, մի անանուն նորոյա եղեռն կոչեցին Երկրաշարժ... Պատանքվեցին սեր ու ծիծաղ, լռեցին երգ ու պար, ու լաց եղավ դուռուկը մղկտաձայն... Ո վ էր տեսել, ո վ էր լսել, որ խաղաղ օրերում մի ամբողջ

գերդաստան վերանա, որ գիրկ գրկի՝ մոր ու մանկան գունեն բետոնե սալերի տակ, որ մի ընտանիքից 4-5 երեխա միաժամանակ ննջեն հավերժ, որ հարսնաքողի տակ չքնաղ դեմքերը ծածկված հարսնացուները չհասցնեն մտնել ամուսնական առազաստ, որ երկունքի ցավերի մեջ ծննդաբերող կինը չհասցնի վայելել ճիչը իր մանկան...

...Դեկտեմբերի 7, 11 անց 41 րոպե... Առկախ ու անձայն մնացին «Յոթ վերք»-ի գանգերը դողանջուն, ժամնար չմնաց գանգերը տար... Խենթացավ ցավից մի ողջ ժողովուրդ, տուն չմնաց, որ կորուստ չունենար, մարդ չմնաց, որ հարազատ չսիրներ... Մեկը գտավ իր տիկնիկին, մյուսն իրենց ընտանեկան այրումը բզկտված, մեկը մորը, մյուսն իր թոռանը, մեկը... հարազատի մարմինն անջուռն և... «ուրախացավ», որ գեթ մարմինն առավ իր գիրկն ու գերեզման փորեց, գունե հողին հանձնեց մարմինը... Կորցրեցին ու գտան, խենթացան ու վերածվեցին, կառուցեցին ու վերանորոգեցին, երգեցին ցավի ու վերագարթոնքի երգեր, պարեցին խուլական ու ապրելու, ապրեցնող, հայտնաբերված պարեր... Դրողաց գետինը, երկինքը որոտաց վենք ապրելու էնք դեռ, մենք ոտքի ենք կանգնելու, արարելու էնք դարձյալ, մենք շատ ենք դիմակայել պատմության անսասն հոլովությունում մեզ բաժին հասած դժվարություններին ու ցավերին բազում, մենք անցել ենք հայախալած կոտորածների, կրակների միջով և ծնկի չենք եկել ճակատագրով մեզ բաժին հասած տառապանքներից... Մենք կա՛նք...

...2017 թվական, դեկտեմբերի 7, 11-ն անց 41 րոպե... քանի-քանի, երեխաներ ծնվեցին, քանի-քանի եկեղեցիներում ժամերգություններ ու պատարագներ եղան, հիշատակի մոմեր վառվեցին այսօր ու խրնկարկեցին 25-30 հազար անմեղ գոհերի հիշատակը պայծառ... և եղև, Լույս . լուսաբացը օր դարձավ, օրը երեկո. գիշերն ի բարին և լինի հավիտյան:

Կարինե ԱՎԱԳՅԱՆ